ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» հուլիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Միմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 11-րդ օրվա (15.07.2024թ.)՝ ժամը 10:30-ը,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.07.2024թ.՝ ժամը 10:30-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնման գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով սահմանված են ապրանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գներ.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Դյուրակիր համակարգիչներ	55 080 000
2	Համակարգիչ ամբողջը մեկում	70 740 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ, 13/30
Simsom	India
Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	ք.Երևան,Շիրազի փ. շ.6/5

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	45899000	20%	55078800	45899000	20%	55078800	
1	Simsom	95080000	0	95080000	95080000	0	95080000	Մերժված
2	Simsom	147400000	0	147400000	4080000	0	4080000	
2	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	55000000	20%	66000000	41900000	20%	50280000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 16.07.2024թ.՝ ժամը 11:00-ին, և Համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ են համարվել համապատասխանաբար՝

- 1-ին չափաբաժն մասով՝ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն,
- 2-րդ չափաբաժնի մասով՝ Simsom-ը:

7.Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, Համակարգում առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.

7.1. «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված 1, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3, հայտի ապահովումը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

7.2. Simsom-ի կողմից ներկայացված հայտում առկա է Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը, Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, բացակայում են իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և հայտի ապահովումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Տեղեկատվություն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին.

8.1. Հաշվի առնելով սույն արձանագրության 7.2. կետը՝ հանձնաժողովը որոշեց 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի հայտը մերժել՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 7.6 կետով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման արդյունքների մասին.

9.1. «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան: Ընդ որում, վերոնշյալ հավելվածում ընկերության կողմից լրացված է 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը, սակայն հաշվի առնելով Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի ե) պարբերությունը, համաձայն որի՝ դիմում-հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում՝ նշված աղյուսակում ընկերության կողմից լրացված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

9.2. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված N 1.3, կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

9.3. «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, և հայտով ներկայացված է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

Հիմք ընդունելով 16.02.2024թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/12-1/2884-2024 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը CLIENT-TREASURY ծրարգրային համակարգով առցանց ստուգեց «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը. CLIENT-TREASURY ծրարգրային համակարգում առկա է «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից հայտի ապահովման նպատակով գանձապետական թիվ 900008000466 հաշվին համապատասխան գումարի վճարումը հավաստող տեղեկատվությունը:

9.4. 1-ին չափաբաժնի մասով ընկերության կողմից Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

9.5. Հանձնաժողովը որոշեց.

«Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տեղեկատվություն՝ ընտրված մասնակցի, մերժված հայտերի, ինչպես նաև Ընթացկարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

10.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

10.1.1. **1-ին** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մյուս մասնակցի՝ Simsom-ի կողմից՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի նշված չափաբաժնի մասով ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

10.1.2. Սույն արձանագրության 8.1 կետով կայացված որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված Simsom-ի հայտը մերժվել է:

10.1.3. 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մյուս մասնակցի՝ Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտը մերժել:

10.1.4. Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Ձեյնալյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան